քարի առաջ, պարսպից դուրս արևելեան գերեզմանատանը.

Գէորգ / հայր է Սալ / նէկեր վարդ.

ԺԳ. դարում Հաւուց Թառն էլ մէկն է արևելեան Հայաստանի նշանաւոր վանքերի շարքում, որ հաւանութեան գիր են տալիս 1246 թուին Կոստանդին կաթուղիկոսի կանոնական թղթին(1) և առհասարակ մասնակցում եկեղեցական ժողովներին և խընդիրներին։

Նոյն թուին բլրի վերայի եկեղեցին արևմտա-հիւսիսային անկիւնում թաղուում է «պարոն» Կուկորը, որի գերեզմանաքարի արձանագրութիւնը տեսանք վերև։ Նա ունի և առանձին արձանագրութիւն եկեղեցու արևմտեան դրան դրանդիի դուրս ընկած կամարի վերայ (պատկ. 11).

«Շնորհիւն ՀՍ ես Կուկորս . . . (փոքր կոտրած, բայց կարելի է լրացնել) [անար]ժան ծառա Ամէնափրկչին եռու զիմ տունն զայգին զՋաղացն եւ ։Բ։ աղբին(2) ի սքանչելիս / եւ սպասաւոր ես . . . (կոտրած) [ուն ։Ա։ ժամ ի]մ հաւրն ։Ա։ իմ մաւրն Ա։ ամ [ուսնո?] (փակագծեալ առաջ երկրորդ տառը կոտրած, ճացածը կոտրած) յ իմ Մահանին կատարիչքն աւրհնին»։

Կուկոր անունով մէկի յիշատակութիւնն ունինք և Կեչառոյքի Ս. Նշանի մի արձանագրութեան մէջ. Գրիգորի որդի Մխիթարիչը իւր «ախբին» այգին Երևանում նուիրում է վանքին և ստանում հինգ ժամ Մխիթարչին, երեքը «տիկնաց տիկնա Կոկորին մաւրն», չորսը Գրիգորին, երեքը Մամիկին։ Գրիգորն ու Մամիկը, պէտք է կարծել, նուիրատուի ծնողներն են, տիկնաց տիկնան՝ կինը և Կուկորը՝ որդին։ Արձանագրութիւնը գրուած է Տ. Գրիգորիսի և Գրիգոր վարդապետի ժամանակ, «յառաջնորդութի Համազասպա», որոնք ապրում էին ԺԲ. դարի վերջերին և ԺԳ.ի սկզբին. Գրիգոր վարդապետը Մոնոնիկ կոչուածն է, որ մասնակից էր Լոռուայ և Անիի ժողովներին(3)։ Տիկնաց տիկնան յիշւում է Հաւուց Թառի «արքայաշէն» դարբասի գաւթի հսկայ խոյակներից մէկի արձանագրութեան մնացորդի մէջ, որով Հաւուց Թառի և Կեչառոյքի Կուկորների նոյնութիւնը հաւանական է դառնում.

«Շնորհիւն ՀՍ ես Տիկնաց տիկին / աւն տիկին միաբանք սքանչելիս / մեր արդեանց եւ սպասաւորք / սորին ։գ։ աւր ժամ»։

Արձանագրութեան մասերը կորած են կամ փլատակների տակ թաղուած։

Վարդանի Աշխարհացոյցը Հաւուց Թառի սրբութիւններից մէկն էլ համարում է Թադէոս առաքեալի աջը, որի սկզբնականը կազմուած էր ՉԻԴ (= 1275) թուին, ինչպէս կ'տեսնենք քիչ յետոյ։

Վանքի պարսպից դուրս, դէպի Գառնի տանող ճանապարհի աջ կողմը ոմն Յակոբ կանգնում է մի խաչ 1278 թուին.

«Ես Յակոբ . . . (քահանայ?) կանկնեցի զսքանչելի նշանս բարէխաւս ինձ եւ ծնողաց իմոց, որք երկրպագէք յիշեցէք յաղաւթս. թվին. ՉԻԷ»։

Գերք և Շաքար ամուսինները 1293 թուին միաբանում են Ամենափրկչիս և 1000 սպիտակի կալուած գնում ուխտի համար (պատկ. 10).

1. Կամօքն ՀՍ ես Գերք եւ ամուսին իմ Շաքարս միաբանեցաք Ամենափրկչիս (իս-ը չ-է բուրդակի մէջ)
2. եւ գնեցաք զՏանձուտն (կարելի է վերջին վանքը ան կամ նա կարդալ) Ջաշիկի նորքն ի ։ռ։ սպ։ եւ տուաք ի սքանչելիս եւ
3. սպասաւորք տեղեցս խոստացան ի տարոյն ։գ։ աւր պատարագել զքՀ ։բ։ աւրն
4. ինձ եւ ։բ։ Շաքարին կատարիչքն աւրհնին ի ՉԽԲ։ թվ։

Այս թուականից առաջ և 1214ից յետոյ՝ «չպետ» (հովիւ) Գրիգորը և ոմն Փառանց արդիւնք են տալիս վանքին.

1. Անուամբն ՀՍ ես Գրիգոր չպետ ծառայեցի զեկեղեցիս (s!) եւ ետու զար
2. դիւնս իմ եւ սպասաւորքս ինձ ։գ։ աւր ժամ գրէցին որ խափանէ դատի ի հոնէ։

(1) Գանձ. Թիֆլիս. Ղուկ. հրատ. 278, 294 եւ շարունակութիւն։

(2) Նշանակում է աղրած, պարարտացրած հող։

(3) Գանձակեցի. 162, 166։